ՀՀԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

08 հունվար, 2026 թվականի № 1-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ և ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 136-Ա որոշմամբ, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2025 թվականի հունվարի 5-ի ՀՄ-02/1/26 գրությունը, «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2026 թվականի հունվարի 5-ի 01/26 գրությունը և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2026 թվականի հունվարի 8-ի Ռ/26 01-001 գրությունը և հաշվի առնելով գործող իրավակարգավորումները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ներկայացնել «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2025 թվականի հունվարի 5-ի ՀՄ-02/1/26 գրությամբ Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված՝ Հանրային հեռարձակողի կողմից 2024 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունը:

2. Մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ներկայացնել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2026 թվականի հունվարի 8-ի Ռ/26 01-001 գրությամբ Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված՝ Հանրային հեռարձակողի կողմից 2024 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունը:

3. Մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ներկայացնել «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2026 թվականի հունվարի 5-ի 01/26 գրությամբ Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված՝ Հանրային հեռարձակողի կողմից 2024 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվությունը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

08 հունվար, 2026 թվականի

ք. Երևան